ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի սոցիալական աշխատողներ,

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ մասնագիտական տոնի՝ Սոցիալական աշխատողի օրվա առթիվ:

Ձեր առաքելությունը բացառիկ է. դուք կանգնած եք այն մարդկանց կողքին, ովքեր ամենից շատը կարիք ունեն հոգատարության, ուշադրության և բարության: Ձեր նվիրումը, անկեղծ վերաբերմունքը և համբերատարությունը ամեն օր կյանքեր են փոխում՝ դժվարությունը վերածելով հույսի, իսկ հուսահատությունը՝ վստահության:

Շնորհակալություն եմ հայտնում բնակիչների հանդեպ ձեր մշտական աջակցման, փութաջան վերաբերմունքի և անշահախնդիր աշխատանքի համար:

Մաղթում եմ առողջություն, հոգևոր խաղաղություն, անսպառ համբերություն և ամենօրյա գոհունակություն ձեր կատարած կարևոր աշխատանքի համար:

Շնորհավոր տոնդ, սիրելի սոցիալական աշխատող: